

Քո հօրն ու մօք աչքերն եկուր, պատճենի ավան
Տղին տեսաւ, աղջիկն ետուրտ

Այսպէս տեսնում ենք Զուլոյի անուան երգուած խառ
զերը ասւում են և Լուրիկի, Խանէի, Ասմարի, Խումարի
ևն. անուան։ Դրանք ուրեմն այն կարգի երգերին են
պատկանում, որոնք ընդհանուր գոյն ունին միայն և,
ինչպէս «Հազար ու մի խաղի» Ա. յիսնեակի ծանօթութեան
մէջ դրել ենք, «անկապ տներով, խառն ի խուռն երգ-
ւում են այս կամ այն անձի, կամ զանազան համանման
դէպքերի մասին»։

Անցնենք միւս տեսակների յարադրութեանը։

(Կը ժաբունակուի)

Մ. Աքեղեան.

Կարից սեր զատելու այլ եւ այլ եղանակներ։

Այն բոլոր միջոցները, որոնք գործազրւում են կաթից հնար
եղածին շափ մեծ քանակութեամբ սեր զատելու և նրանից
ճարպ ստանալու համար, երկու խմբեր են բաժանւում։ ա. ընա-
կան եղանակով կամ կաթը վիռելով սեր քաշելը, երբ ճար-
պային գնտակիկները բարձրանում են կաթի երես, բ. կենարո-
նախոյս զօրութեամբ սեր զատելը։

Ա.) Բնական կամ հասարակ եղանակով կարից սեր զատելը
այժմու քանի գնում աւելի և աւելի կորցնում է իւր նշանա-
կութիւնը, որովհետեւ հետզհետէ ամեն տեղ տարածւում է
կենարոնախոյս մեքենաներով սեր զատելու ամենայալմաք և
դիւրին միջոցը։ Բայց գիւղատնաեսութեան այլ և այլ անքա-
րեյաջող հանգամանքների պատճառով գուցէ մեզանում շատ
ուշ մուտ գործեն սեր զատելու համար գոյութիւն ունեցող
կենարոնախոյս մեքենաները։ Այս պատճառով ընական եղա-
նակով սեր զատելու մասին այստեղ կարեսը ենք համարում
մի հարեւանցի ակնարկ ձգել։

Ոռւսաստանում և մեղանում՝ Կովկասում գործազրւում է
գլխաւորապէս երեք եղանակ։ ա. կաթը վիռում են հասարակ

կաւէ կճումների, բղուզների, տաշտերի, ը. քառանկիւնածև թիթեղեայ ամանների մէջ և գ. Շուարցի կիսատակառներով:

Առաջին տեսակ ամանների մէջ սեր զատելը ամենատանայարման է և անօգուազ. մանր ամանների մեծ քանակութիւնը գժուար է մաքուր վիճակի մէջ պահել. կաւէ ամանների պատերի գժուարութեամբ սառչելու, նըանց անկանոն ձեւ և մակերեսոյթի ներսի մասի անհարթութեան պատճառով սեր զատելը կատարեալ կերպով չէ տեղի ունենում և պակաս կարագ է ստացւում: Նրես քաշած կաթի մէջ մօտաւորապէս $10/0$ ճարպ է մնում, որը ամառնային շոգ օրերում հասնում է մինչև $1,5-20/0$: Պակաս անյարմարութիւն չեն ներկայացնում նաև փայտեայ ամանները:

Հասարակ եղանակով սեր զատելու երկրորդ եղանակն այն է, որ կաթը լցնում են քառանկիւնածև թիթեղեայ թասերի մէջ շատ բարակ շերտով և հանգարտ ժամանակը $120-160$ Ռ. տաքութեան մէջ են թողնում: Այս միջոցը տարածուած է Խուսասատանի մի քանի նահանգներում. այս ամանները գործադրելիս կաթի երեսը սեր լաւ է բռնենում, բայց փռելու համար մեծ տարածութիւն է պահանջւում և աշալուրջ հակողութիւն մաքրութեան վերաբերմամբ: Երես քաշած կաթի մէջ մնում է մօտաւորապէս $0,750/0$ ճարպ, իսկ ամառնային ամիսներում, երբ կաթը շուտով թթվում է, ճարպի քանակութիւնը այդպիսի կաթի մէջ հասնում է մինչև $1,0-1,50/0$:

Կաթից սեր կարելի է քաշել նաև ցըտութեամբ. դորահամար ամանով կաթը պէտք է դնել սառն ջրի կամ սառուցի մէջ: Այսպէս է նուարցի եղանակով կաթից սեր զատելը, որ սկսել է գործադրուել 1860 թուականներից և արագութեամբ տարածուել է այլ և այլ երկրներ և մինչև կենարոնախոյս գործիքների գործադրութիւնը, այսինքն մինչև 1880 թ. ամենալաւ և օգտակար միջոցն էր համարում: Այս եղանակով սեր քաշելիս գործ է գրւում սպիտակ թիթեղեայ բարձր զուգահեռութեած, կողքերը կլորացրած, երբեմն և գլանածեած կամ ծուածեած քուզաններ. սրանք սերանից մինչև 5 սանտիմետր ցած՝ մօտաւուպէս 15-18 գմ. խորութեամբ նոր կթած բալորովին թարմ, հետեապէս և տաք կաթ լցնելուց յետոյ՝ դնել պէտք է $3-40$ Ռ. տաքութիւն ունեցող սառաջրի մէջ և հանգարտ թողնել: Սակայն որքան սառը լինի ջուրը, այնքան աւելի լաւ սեր կը ուներբէք 100 Ռ., բարեխառնութիւնից բարձր չպէտք է լինի: Կրկնում եմ, կաթը սառն ջրի մէջ գրած ժամանակ անպատճառ պէտք է տաք լինի, իսկ եթէ պատահարար սառած եղաւ,

հարկաւոր է նախ տաքացնել մինչև 350 և ասլանոր գնել ջրե մէջ; Մետաղեայ ամանները աւազանի մէջ պէտք է այնպէս տեղաւորել, որ կաթի երեսը աւազանում եղած ջրի մակերևոյթից բարձր մնայ: Այս քուղանները շինում են սովորաբար երկու մեծութեամբ՝ 3 և $1\frac{1}{2}$ վեցտանոց (30—40 լիտր):

Ընդունարանը, որի մէջ տեղաւորում են կաթով լի ամանները, պատրաստուած է լինում փայտից, որի մէջը ցինկի կամ արծնապակած թիթեղով պատած է լինում և կամ քարով ու ցեմենտով շինած. դորա կէոը հողի մէջն է լինում. քարեայ կամ թիթեղեայ աւազանների համար անհրաժեշտ է աւելի սառը ջուր: Ընդունարանի յատակի վերայ դրւում է փայտեայ մի ցանց. սառը ջուրը բաց են թողնում ներքեխց առանձին խողովակով աւազանի մէջ և այստեղ կաթից տաքանալով մի ուրիշ խողովակի միջով անցնում է նորա վերեկի մասերից և դուրս գալիս: Սւազանն այնպէս պէտք է յարմարեցնել, որ աշխատաւորը կարողանայ շուրջը պտտել: Նորա միջի ջրե տաքութիւնը հնար եղածին չափ պէտք է ցած լինի և եթէ համնի 1 $\frac{1}{2}$ լ. անհրաժեշտ է սառուց աւելացնել (մի լիտր կաթի համար 0,75—1 կիլոգրմ. սառուց): Ոկզրի 12 ժամուայ ընթացքում մի լիտր կաթի համար իւրաքանչիւր ժամուամ կարենք է լինում մի լիտր ջուր, բայց յետոյց երբ կաթը սառչում է, միայն այդ քանակութեան $1\frac{1}{3}$ մասը բաւական հնամարուի: Ճարպային գնտակինները իրենց սկզբնական տաքութիւնը կորցնում են աւելի դանդաղ, քան նրանց շրջապատող հեղուկը այդ պատճառով էլ կաթի այս և այն բարդագրիչ մասերի տեսակարար կշռի մէջ եղած տաքութիւնը մէծ լինելով՝ գնտակիններն աւելի արագ կերպով վերև կըարձրանան:

Կաթի երես բարձրացած սերը պէտք է քաշել յատկապէս այդ նպատակով յարմարեցրած առանձին կիսաբոլորակ շերեփով: Երես քաշած կաթի մէջ, եթէ 24 կտմ 36 ժամ (շատ քիչ դէպքերում աւելի ուշ՝ 48 ժամ) շարունակ հանդարտ մնայ, մօտաւորապէս 0,760/0 ճարպ կլինի: Սաստիկ սառնութիւնը, հեշտութեամբ մարքուող կլայքեկած քուղանները, կաթի մակերեսոյթի փոքրութիւնը, որ արտաքին օդի ազգեցութեանը մատչելի է՝ այս բոլորը բարեյածող պայմաններ են սերի զատումը մաքուը և կատարեալ լինելու. Ծնչպէս սերը, նոյնպէս և երես քաշած կաթը մինչև խոլ 48 ժամ անցնելուց յետոյց դարձեալ բոլորովին թողմ կմնայ: Նուարցի եղանակով ստացուած սերը թանձր չել լինում, 100 կիլոգրամ կաթից կատացուի 12—20 կիլոգրամ սեր, որից և դուրս կդայ 3—3,5 կիլոգրամ կա-

բադ։ Այս եղանակով թէպէտ աւելի շատ կարագ է ստացւում, բայց այնչափ համեզ չի լինում։ Սորա առաւելութիւնները հետևեալներն են։ 1) սեր բռնելը կախում չունի արտաքին հանգամանքներից՝ բարեխառնութիւնից, և այն։ 2) կարօտ չէ ծառայի կամ աշխատաւորի աչալուրջ հսկողութեան։ 3) համեմատաբար աւելի մաքուր և կատարեալ է լինում ճարպային մասնիկների կաթի երես բարձրանալը։ 4) սեր զատելու համար ամաններ տեղաւորելիս մեծ տեղ չէ հարկաւորւում (մի կոլի համար 0,20—0,30 քառ. մ.)։ 5) կաթի երես քաշելու և ամանները մաքրելու համար սովորաբար շատ քիչ աշխատութիւն պէտք է գործ դնել։ 6) եթէ աշխատելիս առանձին խնամք գործ գործ, ձեռք բերած կարադը պակաս արժէքաւոր չի լինում միւս եղանակներով ձեռք բերածից։ միակ անյարմարութիւնը որ կայ, այդ այն է, որ պէտք է բաւականաշափ սառցի պաշար կամ սառը ջուր ունենալ։ 7) ցրտութեան միջոցով սեր զատելը նաև այն օգտակարութիւնն ունի, որ երես քաշած կաթի շիճուկը թթուած չի լինում և չնորհիւ իւր քաղցրութեան՝ կարող է գործ ածուել ուտելու համար։ 8) կարագն աւելի երկար ժամանակ կարելի կլինի պահել և 9) սերը քաշելուց յետոյ իսկոյն պէտք է ընդունաբանները և առհասարակ ըոլոր գործիքները մաքրել՝ լուանալով կարծը վրձինով նաև տաք և ապա սառն ջրով, որից յետոյ պէտք է չորացնել և մաքուր տեղ դնել։

Ցրտութեամք սեր զատելու ուրիշ եղանակներ և ուրիշ աւազաններ ես կան։ այդպիսիներից է Ռիմերինը, որը նուարցի աւազանի հետ համեմատած այն առաւելութիւնն ունի, որ քիչ ջուր է պահանջում։

Բ. Կենտրոնախոյս գօրաբեամբ սեր զատելը, Վերոյիշեալ հասարակ եղանակներով սեր զատելն ունի իւր թերութիւնները, մանաւանդ որ սերի մի կարևոր մասը մնում է կաթի մէջ։ Եւրոպայում կաթնատնտեսութեամք պարապողները ժամանակ շահուելու և մեծ արդիւնք ստանալու համար թողին հին եղանակները և սերը կաթից սկսեցին զատել առանձին կենտրոնախոյս զօրութեան վերայ հիմնուած մեքենաներով, որոնք առտիմանաբար կատարելագործուելով հասան ներկայ կատարելութեանը։ Այդ մեքենաներով կաթից սերը զատում է շատ կարճ ժամանակուայ մէջ և աւելի կատարեալ կերպով։ այսպէս օրինակ, 25 լիտր կաթից կարող է դուրս դալ մի կիլոդրամ սեր, որ կազմում է 40/0։

Պատուելիս ըոլոր մարմինները ձեռք են բերում, այսպէս

առած, կենտրոնախոյս զօրութիւն, որը հարկադրում է մարմիններին հեռու թռչել, հեռանալ պայտագույների առանցքից: Թելի վերայ պատռուող վորքիկ քարը եթէ պոկ դայ, կթռուչի մի կողմ: պատռուող անիւի վերայ եթէ ջուր լցնենք, կենտրոնախոյս զօրութեան պատճառովնորա մասնիկները կթռչեն այս ու այն կողմ: Որբան արագ լինեն պայտագույները, այնքան աւելի հեռու կթռչեն քարը և ջրի մասնիկները, հետեւապէս և կենտրոնախոյս զօրութեան առաջին օրենքն այն է, որ ինչքան արագ լինին պտոյները, այնքան աւելի մեծ կինի այդ ոյժը:

Եթէ թելի վերայ քարի փախարէն փայտի մի կտոր ոկտի պատռուել, վերջինս միենոյն արագութեամբ պատռուելով՝ թռուչելու ժամանակ աւելի մօտ տեղ կընկնի, իսկ ընդհակառակը, արճճի կտորը բաւականաչափ հեռու կընկնի քարից: Կենտրոնախոյս զօրութեան երկրորդ օրենքն այն է, որ համեմատաբար ինչքան մեծ լինի մարմնի տեսակարար կտորը, այնքան աւելի մեծ կինի այդ զօրութիւնը: Վերջապէս միենոյն արճճէ գնաժակը եթէ պատռում է մի ոտնաչափ երկարութիւն ունեցող թելի վերայ, աւելի հեռու կթռչի, քան եթէ նա պատռում է $\frac{1}{2}$ ոտնաչափ երկարութեամբ թելի վերայ. Հետեւապէս և կենտրոնախոյս զօրութեան երրորդ օրենքն այն է, որ ինչքան մեծ լինի պտոյների շառախղը, այնքան աւելի մեծ կինի զօրութիւնը: Այժմ, եթէ կաթով լի մի աման արագ արագ պատենք իւր առանցքի շուրջը, կտեսնենք, որ քիչ ժամանակ անցնելուց յետոյ կենտրոնախոյս զօրութեան պատճառով կաթի ըոլոր բաղադրիչ մասերը կձգտեն հեռանալ կենտրոնից դէպի ամանի պատերը. բայց որովհետեւ աւելի ծանր մասերը (երես քաշած կաթը—պանթածինը և այլ բաղադրիչ մասերը) աւելի մեծ ոյժ են ունենում (երկրորդ օրէնք), այդ պատճառով նրանք աւելի հեռու կդնան և ամանի պատերը մօտ տեղ կըռնեն. աւելի թեթև մասերը, այսինքն սերը կենտրոնին մօտ տեղ կըռնէ, իսկ մէջ տեղը կմնայ քիչ ճարպային մանր գնաժակիկներ պարունակող կաթ: Այսպիսով ուրեմն թեթև ճարպ պարունակող սերը հաւաքւում է ամանի մէջ տեղը, իսկ իւր մէջ կաթի ծանր բաղադրիչ մասեր պարունակող երես քաշած կաթը հաւաքւում է պատի շուրջը. այսպիսի դէպրում եթէ ամանի պատերից մի խոզովակ անց կացնենք դէպ դուրս, նրանց միջով մշտապէս հոսող կաթի ճնշմամբ դուրս է քշուում երես քաշած կաթը, իսկ սերը կըռպնայ ամանի շուրթերից, եղբերից: Ահա այս երկոյթի վրայ է հաստատուած տմեն ոխտեմի սերզատիչների—սեպարատօնների կազմութիւնը, որ շատ կարենը նշանակութիւն ունի և որանց

դիւտը մեծ յառաջագիմութիւն պէտք է համարել կաթնաւարնասութեան մէջ:

Մեքենաներով կենտրոնախոյս զօրութեամբ ոեր զատելու առաւելութիւնները ոոքա են. 1) շատ զգալի կերպով մաքուր է դատւում ոերը. մնացած երես քաշած կաթի մէջ միջին հաշուով մնում է $0,250/0$ ճարպ, մինչդեռ անարատ կաթի մէջ միջին հաշուով $3,50/0$ ճարպ է գտնուում. որան համապատասխան կարագն ևս աւելի շատ է ստացւում, քան վերոյիշեալ հասաքակու և է ամենալաւ եղանակներից մէկը գործադրելիս. 2) փոքր տեղ և քիչ ամաններ կհարկաւորուի. 3) աննշան քանակութեամբ ստացի պաշար պէտք է ունենալ. 4) բոլոր աշխատութիւնները շատ շուտ են կատարւում, որովհետեւ ոեր զատելը անմիջապէս կթելուց յետոյ է աեղի ունենում. 5) կենտրոնախոյս զօրութեամբ է ենթարկուում տաք կաթը, որով ստացւում է ընական տաքութեամբ երես քաշած կաթ, որը հորթերին խմացնելու համար աւելի յարմար է և օգտակար, քան հասարակ եղանակով երես քաշած կաթը: որ ամբողջ $1-2$ օր ստացումէ. 6) հեշտութեամբ կարելի է հսկել ծառայողների և նրանց կատարած գործողութիւնների վրայ. 7) մեքենաներով կենտրոնախոյս զօրութեամբ թարմ կաթից և ոերից ստացուած կարսագը աւելի ընտեր և դիմացկուն է լինում, քան թէ հասարակ եղանակով ձեռք բերածը:

Ոեր զատելու համար գործադրուող այս մեքենաները ունեն նաև մի քանի պակասութիւններ, որոնք առաւելութիւնների հետ համեմատած աննշան են. ահա այդ պակասութիւնները. 1) շնորհիւ ոերի լաւ զատուելուն, մնացած կաթի մէջ ճարպային գնտակինները աւելի սակաւ են լինում, այդ պատճառով աւելի պակաս սննդարար է, քան հասարակ ձեռով ստացուած երես քաշած կաթը: Բայց այս տարբերութիւնն աննշան է, որովհետեւ պակասում է միայն իչո տոկոս ճարպ, միւս մնացած սննդարար նիւթերը (մօտաւորապէս $8-90/0$) մնում են երես քաշածի մէջ. 2) մեքենայով երես քաշած և քիչ ճարպային գնտակիններ պարունակող կաթից ստացուած լոռը (твороғъ) շատ չոր ու ցամաք է լինում, որն ուղղելու համար փոխում են պատրաստելու եղանակը. 3) կենտրոնախոյս մեքենաների շատ մասերը կարող են հեշտութեամբ վիճանալ, որով կիսանդարութիւնը կանոնաւոր ընթացքը. մեքենաների հետ գործունեցողները պէտք է ժանօթ և վարժ լինին նորա գործածութեանը. 4) եթէ կաթը մեքենայից դուրս գալիս վրայութ բռնած լինի, այնքան յարմար չի լինի պանթագործութեամն համար,

ինչպէս սովորական կաթը. 5) Եթէ կաթը սահմանուած արագութեւնից աւելի արագ պտտուի, մեքենան կարող է տըաքուել:

(Շարունակելի)։

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՆԵՐԻՑԱԿԱՆ ՄԱՏՈԿԱՐԱՔՈՒԹԵԱՆ

ՎԱՆԱՅ ՀԱՅԿ. ՈՐԲԱՆՈՅԻ

ψ ω ρ θ ω ρ ω 6 ς

7_{μ9m5} 1903 0_{μu.} 1—1904 8_{μu.} 31.

1. Նախորդ ին. շրջանը վակուած օրը՝ դպրոցին աշակերտաց թիւն էր 215: Իսկ ներկայ իշ. շրջանը վակուած օրը՝ 197 է: Նորեկ աշակերտաց թիւը եղած է 26: Իսկ պակսածներուն 44+ որոցմէ 35-ը գործի գացած են՝ ոմանք դպրոցիս վարչութեան խորհրդով: 2—գաւառներ, 5՝ ծխական կամ օտար նախակրթաբաններ, 2՝ մեռած:

2. Դպրոցիս 10 ամեայ ծրագրին տըամաղըած 10 կարգեր յաջորդաբար ունենալով, 197 աշակերտներէն 165-ն կը պատկանին տարը. Նախակրթաբանի 7-ն կարգերուն, իսկ 32-ը բարձր. Նախակրթաբանի 3 գասարաններուն:

3. Այս շրջանի մէջ ունեցած ենք 57 ձրւավագժներ, որոնցմէ
13 ը տարւայ ընթացքին մէջ պակածներէն են, իսկ 44-ը՝ կը
մնան դեռ: Ասոնցմէ 5-ը բարեյլշատակ Խվան Պօպօլի որդե-
գիրներն են. 1-ը որբախնամ սանուց որդեգիր: Զըհավագժնե-
րէն և 6 որդեգիրները՝ իրենց ամբողջ գրական պիտոյք դպրոցէն
կընդունին, ոմանք ևս զգեստի նպաստ:

4. Այս տարին 30 աշակերտ դառնարան չեն փոխեր:

5. Ներկայ շրջանի ընթացաւարտներ 9-ն են. (կ. Փերումեան, Ա. Շ. Մ. Սարգսիսեան, Հ. Տ. Պողոսյան, Յ. Ա. Տ. Կառապետեան. Մ. Տինօսեան, Ա. Անդրեան, Ա. Լնեաթեան, Կ.